ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-1-1-Ա

ք. Երևան 27.01.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի հունվարի 27-ի նիստում քննարկեց 2015 թվականի դեկտեմբերի 25-ին «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված դիմումը «IMT համակցված ապրանքային նշանը» 01.10.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ հետևյալ ապրանքների համար՝ դաս 34. ծխախոտ, սիգարետներ:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում չկա որևէ տեղեկություն, որը ցույց կտար, որ տվյալ ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է այն: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ-ն հանդիսանում է ոլորտում խոշոր արտադրող, հաստատել է իր տեղը հայկական շուկայում և ունի արտադրատեսակների լայն ընտրանի: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ներկայացված համակցված ապրանքային նշանը չի կարող ճանաչվել հանրահայտ ՀՀ-ում:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 81-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված դիմումը «IMT համակցված ապրանքային նշանը» 01.10.2015թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ԱԾՄԴ 34-րդ դասի «ծխախոտ, սիգարետներ» ապրանքների համար:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ